"НАЦИОНАЛЬНЫЙ АКАДЕМИЧЕСКИЙ ТЕАТР
ОПЕРЫ И БАЛЕТА им. А.СПЕНДИАРЯНА"
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ

ALEXANDER SPENDIARIAN OPERA AND BALLET
NATIONAL ACADEMIC THEATRE,
NON-COMMERCIAL STATE ORGANIZATION

«Ա.ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

N 335-L

«20» մարտի 2020 թ.
ք. Երևան

«Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի «ԿՈՐՈՆՈՎԻՐՈՒՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԹԱՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 332-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունել «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 17-րդ կետի, ինչպես նաև Պարետի 2020 թվականի մարտի 17-ի թիվ 2 որոշման պահանջները՝

հրամայում եմ.

1. «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության, (այսուհետ՝ Թատրոն) տնօրենի 2020 թվականի մարտի 16-ի «Կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով Թատրոնի գործունեությունը կասեցնելու մասին» թիվ 298-Լ հրամանում կատարել հետևյալ փոփոխությունն ու լրացումը՝

ա. 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. 2020 թվականի մարտի 16-ից մինչև 2020 թվականի ապրիլի 14-ը Թատրոնի տարածքում արգելվում է հանրային միջոցառումների կազմակերպումը, անցկացումը և դրանց մասնակցությունը: Սույն կետի իմաստով հանրային միջոցառումներ են 20 և ավելի անձանց մասնակցությամբ անցկացվող հետևյալ միջոցառումները.

1) համերգները, թատերական ներկայացումները և մշակութային այլ միջոցառումները.

2) ժամանցային միջոցառումները»:

2. Հրամանը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին կետով՝

«1.1 Նկատի ունենալով, որ «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 17-րդ կետի, ինչպես նաև Պարետի 2020 թվականի մարտի 17-ի թիվ 2 որոշման համաձայն Թատրոնը իրավունք չի ունենալու իրականացնել իր կանոնադրությամբ նախատեսված որևէ գործունեություն, ինչպես նաև կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով՝ 2020 թվականի մարտի 16-ից մինչև 2020 թվականի ապրիլի 14-ը կասեցնել Թատրոնի մշակութային գործունեությունը:

Թատրոնի տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար՝ **Կ. Կիրակոսյան**
ք. Երևան
«20» մարտի 2020 թ.